ԱԶԳԱՅԻՆ

ԱՍՈՂԿԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ «ԳՈՐԾ» ԳԼՈՒԽՆԵՐԸ.

Եթէ կայ հայ ուսումնականի համար հետաքրքրական զբաղմունքներ, դոքա Հայաստանի անցեալի վերաբերեալ պարագաներն են։ Հայոց անտիպ մատենագրութիւնն իւր ամեն մի քայլափոխում բաւականութիւն կարէ տալ իւր սրտեռանդն ուսումնասիրողին։ Սակայն որչա՞փ ցաւալի է, որ ձեռնհասները հեռու են դոցանից և անկարողները հետաքրքրութիւնից զուրկ, զի առաջինները չեն շահագրգռում երկրորդներին, իսկ վերջիններըը չեն պահանջում դոցանից և ոչինչ։ Նոր հետազօտութեանց շահագրգռութիւնը պիտի փոխէ անշուշտ այս դրութիւնը։

Ասողկայ վերջին հրատարակողը հետամուտ էր եղել՝ այդ պատմութեան երկրորդ գրքի Ե. և Զ. գլուխները ձեռք բերելու Վենետկից, սակայն նորան պատասխանել են հռոմէական հայրերն, որ իւրեանց օրինակում և-ս պակասում են դոքա։ Այժմ Պարիզի ազգային մատենադարանում գտնում եմ մէկ արտագրութիւն, որի վերնագիրն է. „Fragment de l'histoire universelle d'Etienne Assoghig. Livre II chap. 5 et 6. Copié sur le Ms. de la Bibl. du couvent de St. Lazare á Venise por.... Etienne Jasédzi Mai 1855". Թէ ով է Վենետկի միաբան, Դիլօրէի այդ մարդասէր կամ ազգասէր բարեկամը, չգիտենք. միայն թէ մէկ լաւ գործ է կատարել, արտագրելով յիշեալ կտորն և ուղարկելով այդ գիտնականին։

Ասասիկ այդ երկու գլուխները, զորոնք անփոփոխ հրատարակում են.

ԳԼ. Ե.

Յայլմէ պատմագրէ—յաղագս Ամիրամունեացն տաճկաց

Որպէս յառաջև ասացաք, ի ԿԸ. (=319) թվականին երևեցաւ Մահմէտ մարգարէ տաճկաց, պեռացեալ ամս Բ.: Աբուբաքր ամս Կ: Ումառ ամս ԺԱ: Աւթման իսկ Ափան ամս Ժ.: Ալիա Ծեր ամս ԻԳ.: Եզիտ ամս Զ.: Մաւիա իսկ Իզիտ ամ մի: Մրուան ամ մի: Աբդլմելք իսկ Մրուան ամս Ի: Վլիթ իսկ Աբդլմելք ամս Թ, մինչև ի ՃԿԳ. թվականս Հայոց: Իսկ զկնի Վլիթի եկած Ամիրալմուամնի ի ՃՂԲ թվականին Մրուան: Աբդլայ մեռաւ ՄԺԹ թվականին: Մահդիք ամիրալմուամնի եղև: Ահարոն մեռաւ ի ՃԾԵ թվականին: Աբդլայ միւս իսկ, որ ի Հռոմս եմուտ: Ահարոն որոյ եղբայր Ջաֆր ՄՂԸ թվականին մեռաւ: Ջաֆր ՅԺԱ թվականին: Ահմատ որ զԱլի որդին յԱհէի Հայոց ամիրայ առաքեաց, և զԱշոտ Իշխանաց Իշխան արար ՅԺԱ թվականին:

Թէև շատ ինչ աշխատեցաք ի պատմական ասուս առաջնոյն գրել կարճ ի կարճոյ զրոյցս անցելոցս. և սոուգիւ են ասացեալքն. սակայն զանուանս և զժամանակս Ամիրալմուամնեացն. զոմանց այլ և այլս գոսաք ի պատմութիւնս. ոչ գիտեմ թէ երկանուն նոքա եղեալք, եթէ մի ընդ միով երևեալ ահաւորք և շքեղք՝ իբրև զինքնակալս երևեցան, զորոց զանուանն յիշատակ գրոյ առին. սակայն մեք զբոլորն ի գրի ասա գրեցաք, զի մի թերութիւն բանի երևեսցի ասա: Եւ զայն ճշգրտեալ գիտասցես, եթէ ի ԿԸ թվականին, և յութերորդ ամի թագաւորութեանն Հերակլի երևեցաւ Մահմէտ և յայնմհետէ եղև բռնութիւն կամ թագաւորութիւն նոցա ի վերայ աշխարհի. և տևեալ կալաւ մինչև ՅԿԳ թվականն Հայոց, և ի ԻԳ. ամին թագաւորին Ամբատայ, որ զփայտէ կախեցաւ, մինչև ցթագաւորելն Յունաց Լևոնի, որդւոյ Վասլին: Իսկ յայնմհետէ և յառաջ թէև ոչ այլ ազգք տիրեցին ի վերայ նոցա, այլ ինքեանք յինքեանս բաժանեալ հա-

կառակ ինքեանց եղեալ, զի ոչ միայն՝ որ զերևելի քաղաք ունէին, պետացեալ բռնակալուք եղեն, այլ և իշխանք դոյզն քաղաքաց և բերդից ինքնակալք եղեն, զայրացեալ ցասմամբ ընդդէմ միմեանց։

ԳԼ. Զ.

Կայսերք Յունաց ի Կոստանդիանոսէ և այսր, անուանք և ժամանակք նոցին։ Յերրորդ ամին Դիոկղետիանոսի թագաւորէ Տրդատ Հայոց, իսկ Դիոկղետիանոս ի վերայ երիցն այլ ևս ԺԵ. ամ թագաւորեաց. և ապա Կոստանդին ամն ԼԲ։ Սա յերկրորդ ամի թագաւորութեան իւրոյ փոխեաց զարքունիսն ի Հռոմայ ի Բիւզանդիա կղզի. և պարապեալ զնա քաղաք մեծ, անուանեաց յիւր անուն Կոստանդնուպոլիս. և բերեալ ընդ իւր մասն ինչ նշխարաց սրբոյն Պետրոսի և Պօղոսի առ ի հաստատութիւն թագաւորութեան։ Յետոյ շինէ զմեծ և զհռչակաւոր եկեղեցին ի սիեզերական մայրաքաղաքին, զոր յանգագոյն անուամբ «առաքեալս» անուանեաց։ Եւ յերրորդ ամին առաքէ զմայր իւր յԵրուսաղէմ ի խնդիր Պատուական խաչին Քրիստոսի։ Սա խնդրեաց և առգնահակին թագն Դաւթի մարգարէին՝ ի Շապհոյ Պարսից արքայէ, զոր բարձեալ էր ի գլխոյն Յեքոնեայ որդւոյ Յոսիայեայ Նաբուքոդոնոսոր արքայ. որպէս ուսուցանէ քեզ պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, որդւոյ Աշոտի Անթիպատրիկի։ Ի սորա Ի ամեկին ՄԳԱ. ամէր ի կենարար չարչարանացն Տեառն։ Եւ զկնի նորա թագաւորեցին որդիք նորա Կոստանդնոս և Կոստաս, և Կոստանդինոս Յունաց և Հռոմոց ամն ԻԴ։ Ի սոցա աւուրս Անդրէաս եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի յօրինէր զշարագրութիւնք տոմարացն։ Եւ առ սա թուղթ գրեաց Կիւրեղ Երուսաղէմացի վասն նշանին երևմանն։ Եւ ապա Յուլիանոս եղբօր որդի Կոստանդիանոսի Բ. ամ։ Ի սորա աւուրս երանելին Աթանաս Հայրապետն Աղէքսանդրի էր ի Սկիւթ՝ երկրորդ անգամ հալածեալ յարիանոսաց։ Սա մեռաւ ի Պարսս, և թաղեցաւ ի Տարսոն, որպէս Սոկրատ ասէ։ Յովիանոս ամ մի։ Վաղենտինեանոս և Վաղէս ամն ԺԱ։ Սա աքսորեաց զաւուրքն Ներսէս Հայրապետն Հայոց ի Պատ-

մոս կղզի՝ և զայլ բազում հարս, որ ի ձկանցն զոր ծովն ինքնին արտաքս ընկենոյր կերակրեալ լինէին։ Ի սոցա մեռասան ամին վախճանեցաւ երանելին Աթանաս յաղեքսանդր՝ դարձեալ ի հալածանաց։ Եւ ի սոցա աւուրսն էին ս. վարդապետքն Բասեղ Կեսարացի և Գրիգոր Նիւսացի եղբայր նորին, և Գրիգոր Նազիանզու աստուածաբանն։ Գրատիանոս ամն Ե. առ սովաւ Եպիփան եպիսկոպոս Կիպրացւոց զպարունակախօսն գրեաց։ Սուրբն Թէոդոս ամն ԺԵ. սա արար ժողով ի Կ. Պոլիս ՃԾ հարցն, վասն Մակեդոնի հոգեմարտի, և էր նա յառաջագոյն մեռեալ։ Արկադէոս և Ոնորիոս որդիքն Թէոդոսի ամն ԻԴ։ Ի սոցա աւուրս պայծառանայր Յովհաննէս Ոսկեբերան, և Եպիփան Կիպրացին, և Ամոն Աղեքսանդրացին, որ զաւետարանին ցանկսն զարդարեաց, և Եւթագի Աղեքսանդրացի, որ հրաշագան յօրինուածով զսուրբ առաքելոցն և զգործոց առաքելոցն և զկաթուղիկէից յառաջաբանսն, և զգլուխսն, և զմասնաւորսն, զվկայութիւնսն և զտունսն կարգեաց։ Թէոդոս փոքր որդի Արկադու ամն ԽԲ. Սա արար ժողով յԵփեսոս զերկերիւր ս. հարսն վասն Նեստորի, որ մարդածին ասէր զՄարիամ և ոչ աստուածածին, և նզովեալ որոշեցաւ ի ժողովոյն։ Ի սորա աւուրս էր ս. Հայրապետն Հայոց Սահակ, յորոյ աւուր դպրութիւն Հայոց լեզուիս ԻԹ գիր ի Դանիէլ փիլիսոփայէ առաքելոյ կարգեցաւ. իսկ զեօթն գրոյն պակասութիւն Մեսրովբ երանելի Տարօնացի խնդրուածովք յԱստուծոյ առնու։ Մարկիանոս ամն Լ։ Սա յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ արար ժողով ի Քաղկեդոն՝ քինախնդիր եղեալ լուծմանն Նեստորի. և հրամայեաց զՆեստոր ի Խուժաստանէ ածել վերսին. այլ բարկութիւն Աստուծոյ հասեալ ի վերայ նորա, եղեալ որդնալից սատակեցաւ։ Լևոն մեծ ամս ԺԷ։ Ոնտոս Լևոն ամ մի։ Զենոնա ամ մի։ Բասիլիսկոս ամ մի։ Ոնտոս Զենոն ամն ԺԲ։ Սա էր այր որկորեայ, և յաւուր բարեկենդանին ագահացեալ յուսել և յըմպել մինչև ի լուսանալն պահոց. ապա յարուցեալ ի քնոյ մնացած ինչ մայեգիտ յատամունս. զի Հռոմք ոչ ունին սովորութիւն յետ կերակրոյն լուանալ և մաքրել զբերանն, մանաւանդ լուալի իրօք զոր օշնանն կոչեն, այլ լոկ ջրով ողողեն.

ապա հրամայեաց հրամանաւ պատրիարգին նղովիւք չափ զվերջին բարեկենդանն պանրուոյ առնել։ Սա գրեաց թուղթ առ ամենայն աշխարհն Յունաց և Հռոմոց, որ կոչի հենոտիկոն, յորում նղովէ զժողովն Քաղկեդոնի և որք երկու բնութիւն ասեն ի Քրիստոս։ Սա դարձոյց զՏիմոթէոս Աղեքսանդր, որ արտասահմանեալն էր ի Զենոնէ, որ յերկրորդ ամին վախճանեցաւ։ Անաստաս ամս ԻԵ։ Սա եկաց ի նմին միաւորութեան Զենոնի ուղղափառութեան։ Յուստիանոս ամս Թ։ Սա զքաղկեդոնացւոյն ընկալաւ։ Յուստինոս ամս ԼԷ։ Ի սորա չորեքտասաներորդն կարգեցաւ Թովմանս Հայոց ի Դւնոյ ժողովին։ Եւ ի սորա ԻԴ. ամին դարգեցին Աղեքսանդրիացիքն զինն և տասներեակ չորեքտասաներորդն զատակաց ԻԸ շրջագայութեամբն ՇԼԲ ամաց բոլորակին։ Սա հալածի ի զօրաց իւրոց վասն դոյզն ինչ պատճառաց։ Երթայ առ թագաւորն Խաքան Խազրաց, և առեալ զդուստր նորա ի կնութիւն իւր և Իշոիթեա քաղաք ի ժառանգութիւն իւր. և օգնութեամբ զօրաց Խազրաց դառնայ ի թագաւորեալ քաղաքն ի Կ. Պոլիս, և հաստատի յաթոռն թագաւորութեան իւրոյ, և ապա շինէ զմեծ և զհռչակաւոր եկեղեցին զսուրբն Սոփի։ Յուստինոս ամս ԺԱ, ուղղափառ։ Տիբեր ամս Դ։ Առ սոփաւ եղև ժողով ի Կ. Պոլիս Հայոց և Հռոմոց, վասն սահմանին Քաղկեդոնի, յորում պարտեցան Հայք։ Մորիկ ամս Ի։ Զսա ասեն լինել յերկրէն Հայոց, յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ որ Օշականն կոչի, որ ի Կ. Պոլիս խնամ ածէր գեղջն իւրում։ Եւ այս արդարացուցանէ զառասպելին, որ ասեն՝ «Ասի յՕշական խունգ առաջի»։ Առ սոփաւ սպանաւ Որմիզդ Պարսից արքայ և թագաւորէ Վահրամ։ Իսկ խոսրով որդի Որմիզդի փախստական անկանի առ Մորիկ, և կնքեցաւ ի Քրիստոս, և օգնականութեամբն Մորկայ թագաւորէ Պարսից։ Փոկաս ամս Ը, որ սպան զՄորիկ. և սկսաւ խոսրով վրէժ խնդրել սպանմանն Մորկայ. և սրով և գերութեամբ աւերեաց զաշխարհն Յունաց, առեալ և զսուրբ քաղաքն Երուսաղէմ գերի, տարաւ և զսուրբ խաչն ի Պարսս։ Հերակլ ամս ԼԱ։ Սա ի ԺԸ. ամի թագաւորութեան իւրոյ սպան զխոսրով թագաւորն, և դարձոյց զսուրբ խաչն ի Պարսից, յո-

բում ամի ՀԼ։ էր Հայոց թվականն։ Ժողովի ամենայն ժամանակն ի ԺԹ. ամէն Տիրերի, ի խաչելութենէ փրկչին մինչև ի ԺԸ. ամն Հերակլի և ցդարձ փրկչական խաչին ամք ՇՂԵ. իսկ յԱդամայ ՐՋԼ։ Կոստանդին ամն Գ։ Առ սոփաւ տաճիկք զԱսորիս կալան, և զԵրուսաղէմ ընդ հարկաւ արարին։ Կոստանդին որդի Կոստանդնու՝ թոռն Հերակլի ամն ԺԹ։ Ի սորա Բ. ամին առաւ Դբլին ի Տաճկաց։ Կոստանդին Գ. ամն ԺԳ։ Յուստիանոս Դ. Կոստանդնի որդի ամն Ե։ Ի սորա Ա. ամին տիրեցին հիւսիսային ազգն, որ ասի խազիրք՝ Հայոց, Վրաց և Աղուանից։ Լևոն ամն Ի։ Աղսիմարոս ամն Է։ Կուար ամն Զ։ Փիլիպպոս ամն Բ։ Արտեմ ամն Բ։ Թէոդոս ամ մի։ Լևոն ամն ԻԴ։ Ի սորա ԺԲ. ամին տաճիկն ի Նիկիա եկն։ Կոստանդին ամն ԼԴ։ Սա ի ԻԱ. ամի թագաւորութեան իւրոյ էառ զկարնոյ քաղաքն ՄԴ թվականին Հայոց։ Ի սորա Բ. ամին, ՄԷ թվականին, Իզիան Հայոց ամիրայ շինեաց զկարնոյ քաղաք։ Լևոն ամն Ե. Կոստանդին և Եռինէ մայր նորին ամն Ժ։ Ի սոցա աւուրս եղև պատերազմն ի Հռոմի ՄԼԷ թվականին։ Զսոցանէ ասեն՝ եթէ տեսեալ տապան մի մեծ մարմարիոն, մեծ լայնութեամբ, և զարմացեալ ընդ մեծութիւն, հրամայեաց շուրջ տալ խփումն տապանին. գտին գրեալ ի նմա ըստ ներքուստ, թէ «Զի՞նչ օգուտ է քեզ ծածկելդ զիս, զի ի ժամանակս Կոստանդին թագաւորին և Եռենայ մօր նորին արեգակն տեսանելոց է զիս։ Նիկոփոռ ամն Թ։ Սա ՄԿ թվականին ի Բուլղարս եմուտ, և կորեաւ ինքն և ժողովուրդ իւր։ Միքայէլ ամն Բ։ Առ սոփաւ Թրակացւոց աւերումն եղև։ Լևոն ամն Ե։ Եկն թշնամին յոսկի դուռնն, և առան բաղում քաղաքք, և գերեցաւ մայր քաղաքացն Մակեդոնացւոց Ադրիանուպոլիս, և զպատերազմն ընկեաց Լևոն։ Սա շինեաց զԲիւզու և զԱրկադուպոլիս և զկամառախ ՄԿԲ թվականին։ Միքայէլ ամն Թ։ Առ սոփաւ Թումայի մոլորեցուցչի գալ և քրիստոնէից շփոթումն և կրծանումն։ Իսկ ՄԿԲ թվականին Միքայէլ կռուեալ ընդ Թումայի, և կալեալ կորեաց զոտս և զձեռս և հան ի փայտի։ Եւ ապա պատերազմեալ Միքայէլի ընդ տաճիկ զօրուն և զբազումն ի նոցանէ սատակեաց ի կուռ նաւին և յաղթեաց նոցա և անկիւռիայն (՞). իսկ ՄԿԸ թվականին

վախճանեցաւ Միքայէլ և թագաւորեաց Թէոփիլոս որդի նորա ամս ԺԳ։ Ի սորա աւուրս եղև Գալուստ հռոմգիերոյն ի գաւառն Բասեան և զբաղումս խողխողեցին սրով ի վերայ յարուցեալ գիւղաքաղաքին Գոմաձորոյ։ Իսկ Թէոփիլոս գնաց ի Խաղտիս, և ել ի ցամաք ընդ կամուրջ, և գերեաց զբաղումս ի Հայոց Հանդերձ ընտանեօք իւրեանց։ Եւ տուեալ զՀիւպատոսութեան պատիւն, այսինքն ապուհիւպատ պատրկութիւն, Աշոտայ որդւոյ Շապհոյ, և թողու ի Սպեր գաւառի։ Եւ ինքն առեալ հարկս ի Թէոդուպոլսեցեաց դարձաւ անդէն։ Եւ ապա եկեալ հռոմոիարանցն ի Վանանդ, ի գիւղն կաճկաքար, կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայէլի։ Եւ ի նոյն ամի եմուտ Թէոփիլոս յԱսորիս, և էառ զքաղաքն Ուրբելի, և պատերազմեցաւ ընդ տաճկայ յԱշմու շատ և յաղթեաց։ Սա ի խաղալն իւրում յարևելս կոյս ի սահմանս Հայոց առնու զՀմու (թէ Հմոլ) բերդն Հայոց, զԱռաջին, և զՄեծկերտ, և զԱլբերդ ի գաւառին Դեղամայ, և զիսոզան, և զՀորրորդ Հայս անապատ առնէ ի մարդոյ և յանասնոց։ Եւ յետ նորա թագաւորէ Միքայէլ որդի նորա ամս ԻԴ. և նա զանիրաւաբար մեռանի ի Վասէ, զոր ընդ իւր թագաւորեցուցեալ էր։ Եւ դարձեալ այլ թագաւորէ Վասիլ ամս ԻԲ։ Սա շինեաց զմեծ եկեղեցին ի Կ. Պոլիս, և զարդարեաց ի զարդ ոսկիապատ, և «ս. Զորավարս» անուանեաց։ Զսա ասեն լեալ ի Տարօն գաւառէ ի գեղջէ Թլայ։ Եւ յաւուրս սորա պայծառանայ ս. պատրիարքարանն առատութեամբ և գպրութեամբ։ Յաւուրս սորա թագաւորէ Աշոտ Հայոց մեծաց։ Որ վախճանեալ Բ. գլխոյ գրոյս, դարձեալ սկսանի ընդ Գ. Նորոգման թագաւորութեան Հայոց՝ ի նոյն գառնալով գիրս։

— o —

Նկատողութիւններով ընդարձակել այս յօդուածն աւելորդ համարելով, յիշենք միայն որ այս Զ. գլուխը մասնաւորապէս հետաքրքրական է, համառոտութիւն կազմելով «կայսերաց պատմութիւն» կոչուած գրքի, որի կտորները միայն՝ Յայտնաւորների և ճառընտիրների մէջ ենք գտնում։

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.

Պարիզ, Օգոստ. 6/25 յուլ. 1892 թ.